



ISSN 1829-0469

ԵՐԱԺԻՇՏ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

Լույս է տեսնում 2005 թ. դեկտեմբերից

02 (146) փետրվար 2018

գինը՝ 100 դրամ



ՄԵՐ ԱՁ ԳԻ,
ՄԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
ՄԵԿԸ...
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՁ ԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ԵՐ ԳՉԱԽՈՒՄԸ - 80

Ս. Տաթևի վանահամալիրում Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբ, գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Հովհաննես Չեքիջյան, 16.10.2017 թ.



Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, 21.04.2017 թ.
Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբ, գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Հովհաննես Չեքիջյանը Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Տ. Նաթան արքեպս. Յովհաննիսեանի, Տ. Տաթև արքեպս. Սարգսեանի հետ

2

“ՄԱՈՆ”



Մերի Մովսիսյան և Լիպարիտ Ավետիսյան

С весенним солнцем в нашем Оперном театре расцвел Цветок, под названием “Манон” – свежий и яркий, семена которого привезли из Москвы и вырастили здесь “флористы” приглашенные руководством нашего театра!

Речь идет о спектакле оперы “Манон” Ж. Массне в постановке – новом прочтении Андрея Жагарса в Московском музыкальном театре им. Станиславского и Немировича-Данченко, который был оценен художественным руководителем нашего Национального Академического театра оперы и балета им. Спендиаряна Константином Орбеляном, приглашен–перенесен с Московской сцены на Ереванскую и представлен в так называемой “сдаче” или “генеральной репетиции” – удавшейся и полной положительных эмоций в составе труппы нашего театра.

Об идее, проведенной работе и оценке результата любезно делятся режиссер спектакля Андрея Жагарс и помощник режиссера Ирина Лычагина...

6

ВОЗРОЖДЕНИЕ К ЮБИЛЕЮ

“Полиевкт” — эпоха раннего христианства, место действия — древняя Армения, поработившая Римом... Существует версия, что к “армянской” теме крупнейший французский драматург Пьер Корнель обратился с подачи Ришелье. Сюжет о Полиевкте, армянском вельможе, принявшем христианство и погибшем за свою веру, драматург заимствовал из “Жизнеописания святых”, составленного византийским историком Симеоном Метафрастом. Как гласит легенда, Полиевкт стал первым мучеником в армянском городе Мелитине.

4



ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ «ԱՐԱՐԱՏ» ԵՐ ԳՉԱԽՈՒՄԸ



«Արարատ» երգչախումբ, գեղարվեստական ղեկավար Գրիգոր Հարությունյան

4



Փառատոնի գեղարվեստական ղեկավար՝ Ռոզե Այգեն (Ռուզաննա) Ազեննեզեր-Կարապետյան, ընթացքում ցուցադրվել են նրա կրկաժմները, լուսանկարները, Բեռլին, Քեսեղիաուս դահլիճում

8

ՄԵՐ ԱԶ ԳԻ, ՄԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ... ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶ ԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՐ ԳԶԱԽՈՒՄԲ - 80

1 Մեր ազգի, մեր մշակույթի հպարտություններից մեկը, մեր հզոր երաժշտական արվեստի ավանդույթների շարունակողն ու ջահակիրը, մեզ աշխարհին ներկայացնող և աշխարհին մեզ հարգել տվող արվեստակիցների զորեղ բանակը ... Այս արտահայտությունները բնորոշում են մի ստեղծագործական կառույց, որն ահա ութ տասնամյակ մեծ արդյունավորությամբ հերկում է հայ և համաշխարհային երգեցողական արվեստի անդաստանը՝ ապահովելով հաստատուն ու զորավոր ներկայություն մեր գեղարվեստական կյանքում, դառնալով նրա անբաժան և պարտադիր մասն ու մեր հոգևոր հացի շտեմարաններից մեկը, և, վստահաբար, շարունակելու է իր փառապանծ երթը հետագայում ևս. ստեղծագործական մեծ ընտանիքի վերածված այդ կառույցը Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբն է:

Ստեղծվել է դժնդակ 1937-ին, երբ անծայրածիր բանտի վերածված խորհրդային կայսրությունում բռնությունները հասել էին ծայրակետին, և համատարած թագավորում էին քծնանքը, մատնությունը, սարսափն ու մահը:

1961 թ. սեպտեմբերին երգչախմբի գեղարվեստական ղեկավար ու զխավոր դիրիժոր է նշանակվում Թուրքիայում դիրիժորական փայլուն ապագայի հեռանկարը թողած և Պոլսից Մայր հայրենիք եկած 33-ամյա Հովհաննես Չեքիջյանը: Երիտասարդ արվեստագետի խմբավարությամբ տեղի ունեցած առաջին իսկ համերգները՝ Երևանում և Մոսկվայում, արժանանում են ունկնդրի բարձր գնահատանքին: Ականավոր դիրիժոր, երաժիշտ և կոմպոզիտոր, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի ղեկավարության ներքո երգչախումբը հասնում է կատարողական բարձր մակարդակի, կանգնում ԽՍՀՄ լավագույն ակադեմիական երգչախմբերի կողքին՝ որոշ առումներով գերազանցելով նրանց, նվաճում բազում տիտղոսներ ու մրցանակներ, ձեռք բերում համաշխարհային համբավ՝ Կոմիտասի, հայ և համաշխարհային երաժշտարվեստի այլ դասականների բազմաթիվ հռչակավոր գործերի կատարումներով:

Երգչախմբի երկացանկը հարուստ է ու բազմազան՝ ի թիվս ռեքվիեմների, օրատորիաների, կանտատաների, պատարագների՝ նաև հայ և համաշխարհային դասական երաժշտարվեստի այնպիսի իսկանների մեծ և փոքր կտավի գործեր, ինչպիսիք են Կոմիտասը, Մ. Եկմալյանը, Ա. Բաբաջանյանը, Յ. Բախը, Ֆ. Հենդելը, Ա. Մոցարտը, Վերդին, Վ. Բեթովենը, Պ. Չայկովսկին, Բորոդինը, Ռոսսինին, Ռ. Վազմերը, Ֆ. Հուբերտը, Բելլինին, Բ. Բեռլիոզը, Շ. Գունոն, Գ. Ֆորեն, Բ. Սմետանան, Մենդելսոնը, Գերշվինը և շատ ուրիշներ: Երգեցիկ խմբի ելույթների ազդագրերը, որոնց արագափոխության ու բազմազանության մասին խոսում էին տակավին անցյալ դարի 70-ականներին, ներառում են գրեթե ողջ համաշխարհային հոգևոր արվեստը: Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը կատարում է մոտ 800 ստեղծագործություն՝ բնագրերով (ընդհանուր առմամբ ավելի քան 27 լեզուներով): Ստեղծագործությունները միայն բնագրերով կատարելու ավանդույթը մասնատրոն հաստատել է հայրենիքում տված հենց առաջին համերգի ընթացքում. խորհրդային Միությունում առաջին անգամ ներկայացվեց Բեդրժիխ Սմետանայի «Կանտատը»՝ չեխերեն: Կան հատուկ երգչախմբի համար գրված գործեր:

Մասնատրոն Չեքիջյանի ղեկավարությամբ երգչախումբը համերգներով հանդես է եկել, ավելի ճիշտ՝ նվաճել է շուրջ երեք տասնյակ երկրների բեմեր՝ տալով 866 համերգ: Երգչախումբը պատիվ է ունեցել հանդես գալու այնպիսի աշխարհառջակ դահլիճներում, ինչպիսիք են «Palais des Congrès», «La Sale Pleyel», Փարիզի «Théâtre des Champs-Élysées», ինչպես նաև Լոնդոնի «Queen Elizabeth Hall» և «Westminster Methodist Center Hall», Պրահայի «Salle Smetana», Նյու Յորքի «Avery Fisher Hall», «Boston Symphony Hall», Դետրոյտի «Orchestra Hall», Լոս Անջելեսի «Scottish Rite Auditorium», «Moscow Conservatorium Hall» և այլն: 97 անգամ ելույթ է ունեցել Սանկտ-Պետերբուրգում՝ հիմնականում Շոստակովիչի անվան ֆիլհարմոնիայի մեծ համերգասրահում. հիշյալ ելույթներից 77-ը տեղի են ունեցել հայտնի Մոնթրեալի սիմֆոնիկ նվագախմբի մասնակցությամբ: Վերջին հյուրախաղերը կայացել են 2016-ի վերջին՝ Բեյրութում: Երգչախումբը տեղի հայկական եկեղեցում կատարել է պատարագ, Սենտ ժոզեֆ եկեղեցում և Կազիմո դը Լուբան դահլիճում տվել համերգներ:

Մեր ազգային կապելլան բարձր կատարողական արվեստով աշխարհին է ներկայացնում հայկական խմբերգային երգերը՝ մեկ անգամ ևս լավագույն ծանաչելի դարձնելով մեր ազգին բնորոշ հնչյունն ու ձայնը:

Մասնատրոն և իր երգչախումբը կոմիտասյան ժառանգության և, առհասարակ, հայկական խմբերգային արվեստի մեծ քարոզիչներն ու պաշտպաններն են: Ասում են՝ երբ կապելլան առաջին անգամ հրավիրվեց Փարիզ՝ «Յունանիտե» թերթի 50-ամյակին նվիրված համդիսություններին մասնակցելու նպատակով, Ֆրասիայում տրվելիք համերգների առթիվ սկսվեցին բանակցությունները, որոնք ընթացան շուրջ մեկ տարի. Փարիզն առաջարկում էր կատարել Բեռլիոզի «Ռեքվիեմը», Բեթովենի Իններորդ սիմֆոնիան և Ռոսսինիի «Stabat Mater»-ը, մասնատրոն Չեքիջյանն էլ պնդում էր, որ առանց Կոմիտասի Փարիզ չի գա: Երկխոսություն-

ըն սրվեց, երբ մասնատրոն ընդհանրապես հրաժարվեց համերգներից: Իմպրեսարիոն ստիպված տեղի տվեց, ձեռք բերվեց համաձայնություն, ըստ որի՝ կլինի նաև խմբերգային համերգ: 1974 թ. սեպտեմբերի 7-ին Փարիզում Կոնգրեսների պալատի սրահում Բուդապեշտի սիմֆոնիկ նվագախմբի երաժշտակցությամբ տեղի ունեցավ համերգը. Բեթովեն Իններորդ սիմֆոնիա, վարում էր Հովհաննես Չեքիջյանը. ներկա էր 3700 մարդ: Համերգն ավարտվեց հայազգի մասնատրոնի շնորհալից հաջողությամբ ու հաղթանակով: Համաշխարհային արվեստի նշանոցը սահմանող կենտրոններից մեկի՝ Փարիզի կախարդված ունկնդիրը պահանջում է շարունակել համերգը: Մասնատրոնի ցուցումով նվագախումբը նստում է, հնչում է Կոմիտաս՝ «Գութաներգ». երաժշտասեր Փարիզը վերստին ունկնդրում է արքայական հայ երգը: Հանդիսականները հոտնկայա ծափահարում են: Հաջորդ օրը բովանդակ արվեստասեր Ֆրանսիան մամուլում կարդում է՝ «Հայաստանի երգչախումբը արդի դարաշրջանի ամենանշանակալից երևույթներից է» («Tierse soir»): Անտարակույս, մենք գործ ունենք դարաշրջանի երաժշտական մեծագույն ֆենոմենի հետ» («Le soir»):

Երգչախմբի համերգներին մասնատրոն Չեքիջյանի ղեկավարությամբ մասնակցել են երաժշտարվեստի զազաթները նվաճած անուններ՝ Իրինա Արխիպովա, Ելենա Օբրազցովա, Եվգենի Նեստերենկո, Վլադիմիր Ատլանտով, Մարիա Բիելզո, Պաստա Բուրչուլաժե, Նիկոլայ Պետրով, Լյուբով Կազարնովսկայա և շատ ուրիշներ:

Դիրիժոր Հովհաննես Չեքիջյանը եղել է Ֆորեի «Ռեքվիեմ»-ի առաջին կատարողը խորհրդային Միությունում՝ Մոսկվայի ֆիլհարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ նվագախմբի հետ (Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ համերգասրահ):

Նշենք, որ ամծանոթ բազմաթիվ երկեր՝ եվրոպական ու ռուսական դասական, ինչպես և ժամանակակից խմբերգային ու վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններ, հայ ունկնդիրն ընթրշխնել է կապելլայի կատարմամբ:

Երգչախմբի կատարումներին և վերջինիս գեղարվեստական ղեկավարի նվաճումներին ու վարպետությանը, բացի հայաստանյան և սփյուռքյան մամուլից, անդրադարձել և նրանց մասին գնահատանքի հիացական խոսքեր են ասել համաշխարհային ճանաչում ունեցող այնպիսի պարբերականներ, ինչպիսիք են «Figaro»-ն, «New York Times»-ը, «The Boston Globe»-ը, «Le Monde»-ը, «Independent»-ը, «Paris Mach»-ը, «Meridional»-ը, «Los Angeles Times»-ը, «Macedonia»-ն, «Le Soir»-ը, «La revue du Liban»-ը, «Le provençal»-ը և այլն: Թուրքական թերթերը, անգամ, բարձր են գնահատել հայ արտիստների արվեստը: 1969-ին բարձր պրոֆեսիոնալիզմի և նվաճումների համար երգչախմբին շնորհվել է Ակադեմիական կարգավիճակը, խումբը կրում է նաև Վաստակավոր կոլեկտիվ տիտղոսը: Երգեցիկ խմբի ակնառու հաղթանակներից է ԽՍՀՄ երգչախմբերի մրցույթում նվաճած առաջին մրցանակը: Երգչախմբի վերջին նվաճումներից է Շվեյցարիայի «Montreux» միջազգային փառատոնի մրցանակը 1999-ին:

Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ «Մելոդիա» ընկերությունը թողարկել է բազմաթիվ ձայնասկավառակներ՝ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի և ԽՍՀՄ առաջնակարգ սիմֆոնիկ նվագախմբերի կատարմամբ: Ձայնագրություններից մեկը 1978 թ. Փարիզում արժանացել է «Grand Prix» մրցանակի: Ձայնասկավառակները խորագրվել են «LITURGIE ARMENIENNE» (թողարկվել է Կանադայում) և «LITURGY of KOMITAS» (թողարկվել է Մոսկվայում):

Նշենք, որ Հայաստանից գատ՝ երգչախմբի համերգները ձայնասփռվել ու պատկերասփռվել են նաև արտերկրում:

Մայր երգչախմբի փառապանծ ընթացքը մեծապես պայմանավորված է մասնատրոնի մարդկային ու մասնագիտական բարձր որակներով: Երգչախմբի տնօրեն Դավիթ Թերգյանը, ով չվկվել է շատ մեծ երաժիշտների հետ, ասում է, որ մասնատրոն կարողացում է երգչախմբի անդամների միջից հանել այն ամենը, ինչը նրանք կարող են տալ և ինչը պահանջում է ինքը: Նրա զխավորությամբ 2 ժամ տևած փոր-



Արամ Խաչատրյան համերգասրահ, 23.12.2017 թ.



Հայաստանի պետական ակադեմիական կապելլա գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Դ. Չեքիջյան, Թբիլիսիի օպերային թատրոն, 19.11.1992 թ.



Հայաստանի պետական ակադեմիական կապելլա գեղարվեստական ղեկավար և դիրիժոր, Դ. Չեքիջյան, Զվարթնոց, 1970-ական թթ.


ծից հետո երգիչ-երգչուհիները ծանձրույթի ու հոգնածության նշույլ անգամ չեն զգում:

Մասնատրոն միշտ անխնայ ծառայել է արվեստին: Նա չնահանջեց նույնիսկ անցյալ դարի մոայլ 90-ականներին, երբ ծանր ժամանակներ էին արվեստի ու նրա մշակների համար, որոնցից շատերը ստիպված լքեցին երկիրը, այլ շարունակեց տոկուն պայքարը հանուն նորին մեծություն արվեստի. վառ ապացույցն ու արդյունքը՝ նրա և իր երգչախմբի վերջին տասնամյակի փայլուն հյուրախաղերը Ֆրանսիայում, Թուրքիայում, Հունաստանում և այլուր:

Դժբախտաբար այսօր մեր արվեստը չորս կողմից ենթարկվում է հարձակման, գրեթե ամեն քայլափոխի մեր լսելիքն է սղոցում ինչ-որ անճաշակ, գռեհիկ, մոդկալի, ոչ հայեցի հնչյունազանգված: Երգչախումբը իր արարումով պահում-պահպանում, պաշտպանում է իսկական, բարձր արվեստը՝ յուրովի պայքարելով չարվեստի դրսևորումների դեմ:

Հովհաննես Չեքիջյանը Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու հավատավոր հետևորդն է: Նրա խմբավարությամբ կապելլան արվեստակիր հանրությանը, ժողովրդական երգերի հետ մեկտեղ, մատուցում է նաև հոգևոր երգեր:

ՄԵՐ ԱԶ ԳԻ, ՄԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ... ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶ ԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՐ ԳՉԱԽՈՒՄԲ - 80



Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբ, գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Հովհաննես Չեքիջյան, Ա. Խաչատրյանի անվ. համերգասրահ

2 Մաեստրոյի հզոր գեղարվեստական ներուժն էր գուցե պատճառը, որ խորհրդային գաղափարախոսությանն անհարիր հայ հոգևոր, նաև աշխարհիկ երգերի կատարումները այն տարիներին չմերժվեցին, մեր երգեցողական արվեստի այդ նշխարները հնչեցին նորովի՝ չեքիջյանական մեկնաբանությամբ։

Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունման 1700-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում 2001-ի փետրվարի 3-ին «Notre Dame de Paris» տաճարի կամարների ներքո Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբը հանդես է եկել միջազգային ծրագրով՝ շուրջ 9000 ունևորի ներկայությամբ. հայ խմբերգային երաժշտության նմուշների կողքին հնչել են Բախի, Յենդելի, Ռոսսինիի, Ֆորեի Բեռլիոզի և այլոց ստեղծագործությունները։

Մաեստրո Չեքիջյանը հոգու թրթիռով է ընդունել հայոց հայրապետի շնորհած «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» շքանշանը, պարգևատրվել է նաև Արամ վեհափառի կողմից։ 2017 թ. դեկտեմբերին ՀՀ Նախագահի կողմից մաեստրոյին շնորհվել է «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչում (իհարկե, արժանացել է նաև բազում այլ շքանշանների ու պարգևների)։

Հովհաննես Չեքիջյան և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբ անվանումները ի սկզբանե հոմանիշվել են, և միանգամայն բնական է, որ առաջարկ է արվել մեծավաստակ համույթին շնորհել «Հովհաննես Չեքիջյանի անվան Հայաստանի պետական ակադեմիական ազգային երգչախումբ» անվանումը, մենք ևս միանում ենք այդ առաջարկին։

Երգչախմբի գործընկերներն են ՀՀ մշակույթի և Սփյուռքի նախարարությունները, Վիվասել Էմ Տե Էս-ը (VivaCell-MTS) և Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նավագախումբը։

Մաեստրոն, բնականաբար, ցանկանում է, որ հետայսու ևս լինեն հյուրախաղեր։ Դավիթ Թերզյանի խոսքով՝ Վրաստանի, Ռուսաստանի, Իսրայելի, Կիպրոսի, Հունաստանի, Կատարի համապատասխան կառույցների հետ ընթանում են բանակցություններ այս տարի նշված երկրներում հյուրախաղերով հանդես գալու համար։

Անցյալ տարվա հոկտեմբերի 16-ին Տաթևի վանական համալիրի բակում «Հայաստանի զարգացման նախաձեռնություններն (IDeA) հիմնադրամի նախաձեռնությամբ «Տաթևի վերածնունդ» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի համերգը։ Մաեստրո Չեքիջյանի ղեկավարությամբ երգչախումբը կատարեց Կոմիտասի, Եկմայրյանի, Մոցարտի, Վերդիի և Չայկովսկու ստեղծագործություններից։

2017 թ. դեկտեմբերի 5-ին Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի հետ տեղի ունեցավ համերգ՝ նվիրված երգչախմբի 80-ամյակին. համերգին ներկա էր Սերժ Սարգսյանը, համերգը վարում էր Երվանդ Ղազանչյանը, ով նաև ասումնեքն։

Ի դեպ, հայրենիքում հաստատվելու օրվանից մաեստրոն ոչ միայն գլխավորում է Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը, այլև, դրան զուգահեռ, ստանձնում Երևանի պետական համալսարանի քառաձայն երգչախմբի ղեկավարումը (1963–1970-ական թթ.)։ Ներդնելով մեծ ջանք ու ավյուն նա իր վիթխարի տաղանդի, հեղինակության, իրեն հատուկ պատասխանատվության բարձր զգացման ու խստապահանջության շնորհիվ հասնում է կատարողական գերազանց արդյունքի։ Երգչախմբի սկզբնավորման հենց առաջին շրջանում, լսելով նրա կատարած դժվարին ստեղծագործությունները, ոմանք չէին հավատում, որ դա սիրողական համույթ է. խումբը իր ներդաշնակ երգեցողությամբ ու գեղարվեստական հասունությամբ չէր զիջում պրոֆեսիոնալ երգչախմբերին. խորհրդային տարիներին ուսանողների բարձրարվեստ կատարմամբ սկսեցին հնչել հայ հոգևոր ու ազգային երգեր։

Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը մշակույթի զինվորների մի բանակ է, որն իր սպարապետի առաջնորդությամբ միշտ փառահեղ հաղթանակներով է ավարտում իր բոլոր ճակատամարտերը՝ հերթական անգամ

ապացուցելով աշխարհին իր հայրենիքի՝ Հայաստանի՝ մշակութային գերտերություն լինելը։

Մեր մայր երգչախմբի մասին հիացական խոսքեր են ասել շատ հայ և օտարազգի մեծեր, մեջբերենք դրանցից մի քանիսը.

Սիրելի Հովհաննես.

Հենց նոր հեռուստատեսությամբ նայում էի քո և քո երգչախմբի մասին հաղորդումը։ Ես կրկին հիացած եմ քո տաղանդով։ Սքանչելի էին Ռոսսինին և Կոմիտասը։ Դու զույների և երանգների այնպիսի մեծ ընդգրկում ունես, որ ապշեցնում է։

Դու և քո գործունեությունը «համամարդկայինը՝ ազգայինի մեջ» բանաձևի վառ ապացույցն եք, դու կարողացել ես քո ազգայինը վերածել համազգայինի և քո արվեստը դարձնել համամարդկային։

Քո՝ Արամ Խաչատրյան

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կոմպոզիտոր,

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ,

Սոցիալիստական աշխատանքի հերոս,

Ակադեմիկոս

... Սոսկվայում ծանաչեցին Հովհաննես Չեքիջյանի մեծությունը և գտան, որ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը ազատ կարող է եվրոպական լավագույն դաիլիժների զարդը լինել։

ԴՄԻՏՐԻ ՇՈՍՏԱԿՈՎԻՉ

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ,

Սոցիալիստական աշխատանքի հերոս,

Լենինյան մրցանակի դափնեկիր

Առանց նոտաների երգելը, ինչպես նաև ստեղծագործությունը միայն բնագրով հնչեցնելը՝ Հովհաննես Չեքիջյանի մեծագույն վաստակն է։

Մեծագույն... Աշխարհում եզակի բան։ Համաշխարհային խմբերգային արվեստում երկրորդ այդպիսի երգչախումբ չկա։ Բացառիկ է...

ՕՅԱՆ ԴՈՒՐՅԱՆ

Դիրիժոր

ՀՀ ժողովրդական արտիստ

«Համերգային ռումբ»

Կապելլայի կատարմամբ հնչում են ոչ միայն տեքստը, այլև ենթատեքստը, ոչ միայն տողերը, այլև այն, ինչ գտնվում է տողերի միջև, տողից վերև ու տողատակին։

Ուղեծիր է ելել երաժշտական ճոր ուղով։ Նրա հրամանատարն ու անձնակազմը եռանդուն են, լի ուժով և համարձակ պոռթկումներով։

Գլխավոր դիրիժոր և գեղարվեստական ղեկավար Հովհաննես Չեքիջյանը ինքնատիպ երաժիշտ է, իսկ երգչախումբը մմանվում է սնդիկով անոթի, որը զգում է ղեկավարի ամենաչնչին թեքումն անգամ։

Հովհաննես Չեքիջյանը կայծակի արագությամբ է արծազանքում երգչախմբի այս կամ այն մասում նկատվող ամենափոքր տատանմանը կամ հնչերանգին։

Յուրաքանչյուր ակնթարթ դիրիժորը պատրաստ է երգչախմբի ղեկավարման վահանակին միացնել նորանոր նրբերանգներ, ինչը կատարվում է էլեկտրոնային վիրտուոզությամբ։

ԳՈՒՏԱՎ ԷՆՆԵՍԱՔՍ

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ,

Սոցիալիստական աշխատանքի հերոս

Մենք՝ պրոֆեսիոնալ երաժիշտներս, համերգի ժամանակ ամենից առաջ մտածում ենք պարտիտուրի, տակտերի տեղաբաշխման, նրբերանգների և այլ բաների մասին։ Միաժամանակ, հսկայական է հրճվանքը, երբ հանդիպում ես այնպիսի կատարողի, որը պրոֆեսիոնալին դարձնում է սովորական ունկնդիր։

Սանկտ Պետերբուրգի ֆիլիարմոնիայի մեծ համերգասրահում Հայաստանի պետական երգչախմբի և մեր սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ լսելով Բեռլիոզի «Ռեքվիեմը», որ իրականացրեց դիրիժոր Հովհաննես Չեքիջյանը, ես բախվեցի մի

այնպիսի մեկնաբանի հետ, որն ստիպեց ինձ մոռանալ պարտիտուրը և իմ պրոֆեսիոնալ վերաբերմունքը երաժշտության հանդեպ։ Ես ականա դարձա սովորական, հիացած ունկնդիր և երջանիկ էի, որ այդպիսի ուրախություն վայելեցի։

ԵՎԳԵՆԻ ՄՈՒՎԻՆՍԿԻ

Սոցիալիստական աշխատանքի հերոս

Լենինյան և ԽՍՀՄ պետական

մրցանակների դափնեկիր,

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

Հայկական կապելլան Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ մեծագույն երևույթ է մեր մշակութային կյանքում։ Երգչախմբի երգեցողությունը հայ ժողովրդի ոգին է։

Ես ընդմիշտ կհիշեմ երգչախմբի ելույթը Գառնիում, ուր երգերը այլ կերպ էին հնչում սարերի և հինավուրց ճարտարապետության ներքո։

Լենինգրադը սիրում է հայկական երաժշտությունը, և այդ սերը ունի խոր արմատներ։

ԲՈՐԻՍ ԴԻՏՐՈՎՍԿԻ

Հնագետ, արևելագետ, պատմաբան։

Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ,

Սոցիալիստական աշխատանքի հերոս,

Բրիտանական ակադեմիայի թղթակից անդամ

Չէի կարծում, որ իմ ստեղծած «ՍՏԱՐԱՏ ՄԱՏԵՐ»-ը այսպես հմուտ ձեռքերով կմեկնաբանվի։ Ջարմանում եմ, որ երգչախումբը երգեց անգիր։ Շատ երջանիկ եմ, որ արժանացա իմ ստեղծագործության գերազանց կատարմանը։

ԲՇԻՇՏՈՆ ԴԵՆԴԵՐԵՑԿԻ

Դիրիժոր

Կոմպոզիտոր

Երգչախմբի կուռ միասնականությունը, իրար լսելու, իրար լրացնելու վարպետությունը, իսկապես, շախմատային թիմային պայքար էր հիշեցնում։

Հայկական կապելլան մշտական շրջագայությունների մեջ էր. նա պահանջվող կոլեկտիվ էր աշխարհի մեծ բեմերի համար և, երևանյան ելույթների ժամանակ, կատակով ասում էին՝ «Չեքիջյանի կապելլայի հյուրախաղերը Երևանում»...

Ես եղել ու մնում եմ Հայաստանի երգչախմբի և նրա մեծահամբավ ղեկավար Հովհաննես Չեքիջյանի արվեստի մշտական երկրպագուն։

ՏԻԳՐԱՆ ԴԵՏՐՈՍՅԱՆ

Շախմատիստ, լրագրող,

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,

Աշխարհի կրկնակի չեմպիոն

Չեքիջյանի կապելլան իր խիստ դասականությամբ, կատարման կուլտուրայով, փիլիսոփայական խոր մեկնաբանումներով համաշխարհային երևույթ է, ազգային մեր ողբերգական խոր հենքով, կենսասիրության մեր անսահմանությամբ, անհատում մեր հավատով։ Եվ առանց նրա՝ կիսատ է մեր խոսքը, պակաս է մեր մարդկայինը, ամբողջական չէ մեր ազգայինը։

ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

...Ես հիմա ամեն ինչ ընկալում եմ հայոց լեզվի տեսանկյունով։ Եվ այնքան երջանիկ եմ լինում, երբ լսում եմ Չեքիջյանի երգչախմբի ՀԱՅԵՐԵՆԸ։

Իմ մայրենի լեզուն իրեն երջանիկ է զգում այս երգչախմբի գրկում։

ԼԵՎՈՆ ՀԱԽԵՐԴՅԱՆ

Հայաստանի ՀԳԱ ակադեմիկոս

ՀՐԱՉՅԱ ԱՐՄԵՆՅԱՆ

(ՀՐԱՉՅԱ ԲԱԼՈՅԱՆ)

Բանասիրական գիտությունների թեկնածու

ВОЗРОЖДЕНИЕ К ЮБИЛЕЮ



Доницетти “Полиевкт” на сцене Национального Академического театра оперы и балета им. А. Спендиаряна

1 За христианскую веру он пострадал при императоре Валериане (253–259 гг. н. э.). Когда в Римской империи восторжествовала христианская церковь, в Мелитине был возведен храм во имя мученика Полиевкта. Сюжет пьесы Корнелия лег в основу либретто оперы Газтано Доницетти “Полиевкт” “Poliouto” (1838). Хотя эта опера Доницетти ставится редко, ее называют самым интеллектуальным и аристократическим произведением композитора. На темных страницах истории мирового искусства есть имена Мастеров, таланты которых не оценивались ко времени или творения которых подвергались искусственному забвению, но жизнь все расставляла по местам и справедливость торжествуя возводила из пепла сияющие алмазы... То же произошло в нашем недалеком прошлом с постановками знаменитого оперного певца и режиссера Тиграна Левонювича Левоняна, которого, лишив театра, лишили смысла жизни, а в театре, буквально, ликвидировали его спектакли...

Но все эти годы одна из его блестящих постановок не давала о себе забыть, и некоторые ценители таланта режиссера и великолетия этого спектакля делали все от себя зависящее, чтоб вернуть его на нашу сцену!

В преддверии Нового 2018 года это наконец произошло! Опера “Полиевкт” Г. Доницетти в постановке Тиграна Левоняна снова ожила на сцене Национального Академического театра оперы и балета им. А. Спендиаряна...

По этому случаю, а также по поводу юбилея премьеры этого спектакля поделился эмоциями друг и коллега ныне покойного Тиграна Левоняна Заслуженный артист РА, профессор Ереванской консерватории им. Комитаса, известный баритон Константин Симонян.

Великая опера Газтано Доницетти...Со дня премьеры ее в нашем Оперном театре прошло 25 лет! 17–18 июля 1993 года... Для того времени это был подвиг, без всякого преувеличения! Вспомните это суровое время – холод, темнота, война в Карабахе... Люди думали о куске хлеба – несчастные 250 грамм, 5 литров солярки для обогрева и радовались часу электричества, куда уж про театр думать, но Тигран Левонян, возглавлявший в то время театр, сумел подарить Армении и всему армянскому народу праздник! Навстречу празднества 1700–летия принятия Христианства как государственной религии Армении этот спектакль стал лучом солнца в темном царстве...


А в 1995–м году прошли очередные дни культуры и искусства Армении. Что могла представить наша Страна после стольких трудных лет?! Москву вообще трудно чем–то удивить – она все видела, но мы смогли это сделать! Спектакль “Полиевкт” вызвал фурор! В такое трудное время создать

спектакль такого уровня было чудом! Причем все – солисты, оркестр, балет были наши, а не приглашенные из теплых и обеспеченных стран Европы! Талант Тиграна Левоняна в том и заключался, что он смог объединить всех одной идеей и как лидер повел за собой к Победе! Потом была Мерида, Испания – Европейский фестиваль оперной классики – и снова успех!

И что еще могла представить Армения в масштабном празднестве 1700–летия принятия Христианства?! Естественно постановку Тиграна Левоняна – “Полиевкт”! Правительством было довольно, ведь лицо страны, ее культура и достоинство были на высоте! Было обещано, что спектакль “Полиевкт” будет награжден государственной наградой, так же как исполнители и все постановочные цеха, но Тигран Левонян не пошел на поклон! Будучи независимым человеком, он угрождать никому не собирался, хотя от него этого ждали... Видимо, чего и не простили...Началась травля и всяческие клеветнические высказывания о нем... Этот круг людей добился снятия Левоняна с должности



Г. Доницетти “Полиевкт”, в роли Северо Константин Симонян



директора и худ. руководителя театра... Они по сей день живы и здоровы и ходят по улицам города, но может, когда–нибудь у них проснется чувство совести, и прозвучат хотя бы какие–то извинения, пусть с огромным опозданием... Лучше позже, чем никогда... Ведь Тигран Левонян, получив незаслуженную обиду, ушел из жизни в самом расцвете творческих сил и возможностей!

Мы теряем лучших сынов в годы войны и лишений, но сознательно травить человека, выдающегося режиссера и певца, много лет посветившего национальному и мировому оперному искусству! И кто бы, кроме него, повторюсь, смог в те годы сберечь и поднять на такой уровень театр, утверждаю – никто!!! И театр выжил, тогда и спаслись оставшиеся творческие силы, именно единством тех, кто не покинув Родину, был верен ему и своему лидеру Тиграну Левоняну.

“Полиевкт” – спектакль мирового уровня, это мнение очень и очень авторитетных специалистов! И прекрасно, что сегодня он, наконец–то восстановлен в нашем театре! Я благодарен художественному руководству театра Константину Орбеляну, благодарен режиссеру – восстановителю спектакля Жанне Тамизян, всему творческому коллективу театра!

Тигран Левонян достоин, чтоб его театр обрел вторую жизнь! Светлая ему память и спасибо всем, кто помог вернуть этот спектакль на нашу сцену!

ВИКТОРИЯ АЛЕКСАНОВНА ПОШОТЯН
режисер музыкального театра

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ «ԱՐԱՐԱՏ» ԵՐ ԳՉԱԽՈՒՄԲԸ

«Արարատ» երգչախումբը Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանի նախաձեռնությամբ ու օրհնությամբ հիմնադրել են մի շարք մասնագիտական անսամբլներ և երգչախմբեր: Թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու երիտասարդաց միության «Արարատ» երգչախումբը ձևավորվել է 2013 թ. նաև Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ և ԱՅԹ երիտասարդաց միությունների համակարգող Արթուրյանի Ս. Պետրոս ավագ քահանա Մալյանի նախաձեռնությամբ: Երգչախումբը կազմվել է նույն միության անդամներից և երաժշտական բարձրագույն կրթություն ունեցող հիմնականում երիտասարդներից: Ծրագիրը հիմնականում ընդգրկում է հայ հոգևոր և աշխարհիկ խմբերգեր, սակայն առկա են նաև ռուսական և արևմտաեվրոպական դասական կոմպոզիտորների երկեր: Բացի եկեղեցու ծխաարարողակարգերից (Ս. Պատարագ, ժամերգություններ): «Արարատ» երգչախումբը ծավալում է նաև համերգային գործունեություն: Երգչախումբը մասնակցել է թեմական բազմաթիվ միջոցառումների, հանդես է եկել տարբեր համերգային ծրագրերով՝ արժանանալով բարձր գնահատականի և պատվոգրերի: Բացի ա կապելլա երգեցողությունից՝ նրանք հանդես են գալիս նաև անհատ երաժիշտ-կատարողների և տարբեր երաժշտական խմբերի հետ: 2015-ին Կոմիտասի թանգարան–ինստիտուտում ԵՊԿ ուսանողական խորհրդի հրավերով «Արարատ» երգչախումբը մասնակցեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված համերգին՝ հանդես գալով հայ հոգևոր խմբերգերի կատարմամբ: 2015 թ.

Կոմիտասի անվ. Կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ երգչախմբի անդրանիկ մենահամերգը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, կատարվել է բացառապես հայ կոմպոզիտորների հոգևոր և աշխարհիկ ժանրերի խմբերգային երկեր: 2016 թ. Գյումրիում մասնակցել է երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» 8-րդ միջազգային մրցույթ–փառատոնին՝ «Երգչախումբ» անվանակարգում արժանանալով 2-րդ կարգի մրցանակի, իսկ գեղարվեստական ղեկավար Գրիգոր Հարությունյանը՝ «Լավագույն խմբավար» կոչմանը:

ԳՐԱՐԱՆ ԵՎԳՈՆԱՆ
երաժշտագետ

ПАМЯТИ ДРУГА

Всегда скромный, спрокойный, доброжелательный и увлеченный какой-то темой, которая вдохновляет его на творчество – таким мы запомним Эдуарда Садоояна, ушедшего из жизни 20 февраля этого года.

А темы его были, казалось, неизмеримо шире его скромных притязаний на композиторской стезе. Григор Лусаворич, Григор Нарекаци, Маштоц – вот личности, вдохновлявшие его на творчество в последние двадцать лет, жизнеописания которых легли в основу его оперных и балетных произведений. В нем на очень высокой эмоциональной ноте отзывалось историческое прошлое его народа, величие и драматизм жизни национальных гениев. Он им посвящал свое вдохновение, свою огромную любовь простолюдия, обратившего на них, как на картинах художников эпохи Возрождения, свой восторженный взор... Я так и вижу его в этой народной толпе, любовно внимающего великим проповедникам.

Он был истинно человеком из народа, был слит с народом как никто из нас, знал священные книги, читал молитвы, дарил друзьям Библию.

Как композитор, он прославился давно, в молодые годы, на пороге своего творческого пути. Прославился монооперой “Записки Марии Волконской”, созданной в 1978 году на основе мемуаров княгини, в юности ставшей женой князя Волконского, будущего декабриста, и отправившейся добровольно в Сибирь, чтобы поддержать его в пребывании там на каторге.

Этой теме все удивлялись: где Садоян – где декабристы... Но именно здесь и кроется разгадка его натуры. Он был удивительно отзывчивым человеком, эмоциональным, готовым к переживаниям за кого-то, за что-то давно прошедшее и далекое от него... Он рассказывал, как обрел этот сюжет. Однажды, проходя мимо



Эдуард Садоян

